

ERASMUS+ BOOST ծրագրի շրջանակներում վերապատրաստում Տալլինի տեխնոլոգիական համալսարանում (2018թ. հոկտեմբերի 22-26)

2018թ. -ի հոկտեմբերի 22-26-ը ERASMUS+ BOOST ծրագրի շրջանակներում 25 մասնակիցներ Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական, Հայաստանի Ամերիկյան, Շիրակի պետական, Վանաձորի պետական համալսարաններից, Կոմիտասի անվան Երևանի պետական կոնսերվատորիայից, ՀՀ Կրթության և գիտության նախարարությունից և Ակադեմիական փոխձանաչման և շարժունության ազգային տեղեկատվական կենտրոնից, ինչպես նաև Էվրոպական գործընկերներ բուհերի ներկայացուցիչներ մասնակցեցին Տալլինի տեխնոլոգիական համալսարանում կայացած վերապատրաստմանը:

Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարանից մասնակցել են ՇՂՀ Արտաքին համագործակցության և հասարակայնության հետ կապերի կենտրոնի տնօրեն Հովիկ Մելքոնյանը և Ուսումնական գործընթացի կառավարման կենտրոնի աշխատակից Քրիստինե Նիկողոսյանը:

Վերապատրաստման նպատակն էր վերանայել ԵՄ և գործընկեր համալսարանների միջև իրականացվող միջազգային կրեդիտային շարժունության ծրագրերի իրագործումը, ինչպես նաև ծանոթանալ համատեղ ծրագրերի կազմման և իրականացման մանրամասներին:

Հայկական համալսարանների մասնակիցներին ներկայացվեցին նաև հյուրընկալող բուհի միջազգայնացման ռազմավարական ծրագրի կարևոր ուղղությունները, ձեռքբերումներն ու մարտահրավերները, ինչպես նաև ուսումնական գործընթացի և քաղաքականության կապը միջազգայնացման գործընթացի հետ:

Վերապատրաստումներին հաջորդեց նաև ծրագրի համակարգման հանդիպումը, որի ընթացքում քննարկվեցին ծրագրի արդյունքներն ու ձեռքբերումները, ինչպես նաև ծրագրի հետագա գործողությունների շրջանակը:

[Training agenda](#)

[Training minutes](#)







